քարեաց, զՅիսուս յիշեսջիր, ով ընթերցող. աղաչեմ և պաղա-
տիմ, և դուք յիշեալ լինջիք ի Տէր Յիսուս. զիմ ապաւինեալ
Քրիստոսն աղաչեցէք. Թերեւս ինձ ողորմեսցի անհեղ ատենին և
ի բորբոքեալ բոցոյն նորա: Ես Լեւոն Թագաւորս ամենայն Հայոց,
ի Թվին ՉՀԹ (= 1330) շնորհեցի զգիրքս Քարաքոյ հայ ծա-
ռայնուն, որ յամենայն ժամ կարդան յեկեղեցիս զմարտի-
րոսացն նահատակութիւն եւ զքրիստոնէութիւն հաւատոյն, որ
վասն անուանն Քրիստոսի յանձինս իւրեանց կրեցին. զոր լը-
սեն ծառայքն և քաջալերեալ յորդորին, ի սէրն Քրիստոսի եւ
հաստատին ի հաւատս նորին և համբերութեամբ տանին բա-
զում վշտաց և նեղութեանց զորս կրեն վասն անուանն Քրիս-
տոսի, ակն ունելով երանական յուսոյն, և հետեւողք լինին
բազմաչարչար մարտիրոսացն, եւ յորժամ ընթեռնուն եւ լսեն
զչարչարանս մարտիրոսաց նա զմեզ յիշեն յաղօթս իւրեանց:
Ու կու աղչենք զքահանայքդ որ զկարդալն անփոյթ չայնէք
վասն սիրոյն Քրիստոսի որ աւրհնեալ և յաւիտեան»: Դարձեալ
նոյն ձեռագրին մէջ. (անհարթ գրով).

«Պարգեւք է գիրքս ի Լեւոն
Թագաւորէն Հայոց
ի Քարաք եկեղեցին մնացական.»

«Ով սուրբ եղբարք, որք ընթեռնուք զսրբոցն ճգնութիւն
և զկատարումն ու մխիթարիք հոգով. յիշեցէք ի Քրիստոս զպա-
րոն Վասիլն. զտէր Սիմանայ կլային՝ Բաւգլէրն (Պօտլէռ), որ է
քեռի Լեւոն Թագաւորին, եւ եբեր զգիրքս ձեզ ի մխիթարու-
թիւն: Դուք խնդրեցէք ի Քրիստոսէ իր Թողութիւն եւ իւր
նախնեացն արքայութիւն. եւ ի բանտէն ձեզ ազատութիւն եւ
Տէրն կատարէ զխնդիրքն ձեր ի բարին: Եւ զանարժանս այլ
յիշեցէք զԳրիգոր երէցս Սիմանայ կլայցիս որ եկի . . . ի հետ
իմ պարոնին ու բերաք զգիրքս Քարաքոյ եկեղեցւոյն, ի Թվին
ՉՀԸ (=1329) և Սիմուն Թարգմանին մեղաց Թողութիւն»: Ձե-
ռագիրս այս յիշատակարաններէն զատ ունի նաեւ հետեւեալ
յուշագրութիւնը, «զառածեալ մեղօք զՅովհաննէս սարկաւագ
յիշեսջիք միով Տէր ողորմիայիւ», «Աղաչեմ յիշեսջիք զամե-
նայն... զՅովհաննէս եպիսկոպոսն զԵմ. (զԵրուսաղիմացին ?).
(Նաեւ Սաւալեան, էջ 606-607):

Այս ձեռագիրը 1853ին գտնուած է Երուսաղէմի մէջ և գըր-